



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Պարենային անվտանգությունը ռազմավարական նշանակություն ունի

Որքան երկրի անվտանգության եւ ինքնաբավության տեսակետից մեծ նշանակություն ունի պարենային անվտանգությունը, իսկ պարենային անվտանգությունը ենթադրում է, որ երկրի բնակչության կողմից սպառվող մթերքը կամ նվազագույն սպառողական զամբյուղի մեջ ներառվող պարենը պետք է արտադրվի նույն երկրի միջոցներով: Սա պետք է դառնա նաեւ մեր երկրի հիմնական ռազմավարական նպատակակետերից մեկը:

Նախքան ադրբեջանա-դարբադյան հակամարտության սկիզբը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գյուղատնտեսական արտադրանքը խոշոր ծավալներ է ունեցել, որով ոչ միայն բավարարել է մարզի բնակչության պահանջարկը, այլև մատակարարել է Ադրբեջանական ԽՍՀ-ին:

Այդ արտադրանքի մեջ, իհարկե, զգալի մաս է կազմել անասնապահությունը, որով հիմնականում զբաղվել են Ղարաբաղում ապրող ադրբեջանցիները, իսկ ադրբեջանցիների փախուստից հետո այդ ռեսուրսները վատնվել են առանձին անհատների կողմից: Պատերազմի արդյունքում՝ ինչպես մարզի ամբողջ տնտեսությունը, այնպես էլ գյուղատնտեսությունը հայտնվել են կաթվածահար վիճակում:

Դժբախտաբար, հետպատերազմյան շրջանում պետական ռեսուրսները չեն ուղղվել գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ: Միայն 2007 թվականից հետո է ստեղծվել Գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը, իսկ մինչ այդ գյուղատնտեսության զարգացման համար զանազան միջոցներով ձեռք բերված վարկերն ու դրամական միջոցները, կարելի է ասել, փոշիացվել են:

Իհարկե, Գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կատարած աշխատանքները դեռեւս շոշափելի չեն ԼՂՀ ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժնի աճի ապահովման տեսանկյունից:

Պատերազմից անմիջապես հետո երկրի տնտեսության հիմնական շարժիչը դարձավ պատերազմի հետեւանքով ձեռք բերված ռեսուրսների անխոհեմ վատնումը:

Իսկ այդ փուլից հետո ռեսուրսների օգտագործման գաղափարը կարծես թե արմատավորվեց այս անգամ բնական ռեսուրսների անխնայ օգտագործմամբ:

Անժխտելի է, որ հանքարդյունաբերության ոլորտը գերակա դիրք է ապահովում ԼՂՀ տնտեսական աճի մեջ եւ տարիներ շարունակ կարողացել է ապահովել պետական եկամուտների խոշոր բաժինը, սակայն պետք է գիտակցել, որ՝ ինչպես հետպատերազմյան շրջանի ռեսուրսները, այնպես էլ բնական ռեսուրսները անսահմանափակ չեն:

Արցախյան պատերազմի հաղթանակի արդյունքում ԼՂՀ-ում առկա են հազարավոր հեկտարներով ազատագրված հողատարածքներ, որոնք մինչ այժմ միայն դիտվել են որպես «անվտանգության գոտի» եւ զանց են առնվել նրանց նշանակությունը տնտեսության զարգացման եւ հատկապես, ինչպես վերը նշվեց, երկրի պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Այս հողատարածքները արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ են թե՛ ենթակառուցվածքների, թե՛ տեխնիկայի եւ թե՛ որակյալ սերմնացույի ձեռքբերումը, որի համար անհրաժեշտ են խոշոր ներդրումներ:

Ներդրումները նախ եւ առաջ պետք է ապահովվեն ոչ միայն վարկային ռեսուրսների հաշվին, այլև գործարարների եւ մասնագետների ներգրավմամբ:

Անհրաժեշտ է, որպեսզի իշխանությունների կողմից նպաստավոր պայմաններ եւ օրենսդրական երաշխիքներ ստեղծվեն հարկ եղած ներդրումները ապահովելու համար:

Այս ուղղությամբ վերջին մեկուկես տարվա ընթացքում զգալի աշխատանքներ են տարվել ԼՂՀ հարավային թեւում, հատկապես Արաքսի հովտում:

Սակայն պետք է խոստովանել, որ դեռեւս բավարար չեն աշխատանքները, եւ հատկապես ներդրումներն ապահովելու համար չեն ձեռնարկվում արտոնյալ օրենսդրական նախաձեռնություններ:

Անհրաժեշտ է իշխանությունների կողմից խրախուսական նախաձեռնություններ այդ ուղղությամբ, նորանոր ներդրումների ապահովման ուղղությամբ, ցանկանում ենք՝ զգալիք տարիներին մեր երկրի գյուղատնտեսությունը առավել մեծ տեղ գրավի ԼՂՀ ՀՆԱ-ում:



### Խորհրդարանական կառավարման համակարգի առավելությունները

Խորհրդարանական հանրապետության հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կառավարությունը ձեւավորվում է խորհրդարանական հիմքով եւ ամբողջապես պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջեւ:

Խորհրդարանական հանրապետությունը հիմնականում բնութագրվում է նրանով, որ իշխանական գերակայությունը պետական կառավարման այդ համակարգում պատկանում է խորհրդարանին, իսկ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի, այլ ոչ թե նախագահի առջեւ, եւ հրաժարական է տալիս խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելու դեպքում: Կառավարման այս համակարգում նույնպես օգտագործվում է իշխանությունների տարանջատման սկզբունքը եւ փոխադարձ գապումների մեխանիզմը: Գործադիր իշխանությունը, ի դեմս կառավարության, ունի ինքնուրույնություն, որի օրինակ կարող է լինել այն, որ խորհրդարանի կողմից կառավարությանը երկրորդ անգամ անվստահություն հայտնելու դեպքում կառավարությունը կարող է դիմել երկրի նախագահին խորհրդարանը ցրելու եւ նոր ընտրություններ նշանակելու համար: Խորհրդարանական կառավարման դեպքում

կառավարությունը որոշակի կախվածություն է ունենում խորհրդարանից, որն արտահայտվում է նրանում, որ կառավարության ղեկավար է նշանակվում խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցությունից կամ կուլիցիայից, կառավարությունը հաշվետու է միայն խորհրդարանին եւ վերահսկվում է նրա կողմից, եւ ցանկացած ժամանակ խորհրդարանը կարող է կառավարության հրաժարականը պահանջել անվստահության քվեի միջոցով:

Խորհրդարանական կառավարման համակարգի առավելությունն այն է, որ, ի տարբերություն նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգերի, խորհրդարանական կառավարման համակարգում ներառված սկզբունքներով եւ կազմակերպվածությամբ ահազին նվազեցնում է քաղաքական ճգնաժամի առաջացումը երկրում՝ զսպելով օրենսդիր եւ գործադիր իշխանությունների միջեւ դիմակայության առաջացման հնարավորությունը:

Խորհրդարանական կառավարման համակարգի մեկ այլ առավելություն է՝ երկրի կառավարման համար կարեւորագույն որոշումներ ընդունելու ժամանակ երկրի բնակչության առավել ներկայացվածությունը, այսինքն՝ եթե նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգում երկրի համար կարեւորագույն որոշումներ ընդունվում է հիմնականում նախագահի կողմից, ով հանդիսանում է ընտրությունների միջոցով բնակչության մեծամասնությունը ներկայացնողը, ապա խորհրդարանական կառավարման համակարգում կարեւորագույն որոշումներ ընդունելու ժամանակ խորհրդարանում առկա բոլոր քաղաքական ուժերին մասնակցության հնարավորություն է տրվում, այսինքն՝ նույնիսկ նվազագույն քվե ստացած եւ երկրի բնակչության փոքր հատվածը ներկայացնող քաղաքական ուժերը նույնպես հնարավորություն են ունենում մասնակցելու երկրի համար կարեւորագույն որոշումներ ընդունելու գործընթացին:

Խորհրդարանական հանրապետության դեպքում կարելի է ասել նաեւ, որ երկրի համար կարեւորագույն որոշումներ ընդունելու գործընթացն ավելի ծավալուն եւ մանրակրկիտ է լինում, քանի որ այս դեպքում ընդունվելիք որոշումների վերաբերյալ իրենց կարծիքներն են արտահայտում տարբեր քաղաքական ուժեր, եւ տարաբնույթ մտեցումների արդյունքում ընդունվում է առավել նպատակահարմար որոշում:

### «Ներկա մարտահրավերներին դիմակայելու համար Արցախում պետք է լինի խորհրդարանական կառավարման համակարգ»։ Ա. Աղաբեկյան



100% համամասնական ընտրակարգի դեմ հանդես եկող ոչ ոք չի կարող ինձ համոզել, որ այդ ընտրակարգը Ազգային ժողովը կտրում է հասարակությունից: Կարծում եմ, որ կառավարության այս նախաձեռնությունը լուրջ քննարկման առարկա է դառնալու ԼՂՀ Ազգային ժողովում, եւ...

Կարդացեք 2-րդ էջում

### Մանրամասներ Բաքվում անցկացված ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նիստից



Բաքվում մեկնարկել է ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նիստը: Մշտական հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել առավոտյան, ելույթ են ունեցել ԵԱՀԿ ԽՎ նախագահ Ռանկո Կրիվկայաչիչը եւ գլխավոր քարտուղար Սպենսեր Օլիվերը:

Կարդացեք 5-րդ էջում





### ՀՀ ԱԺ-ի և ԼՂՀ ԱԺ-ի միջխորհրդարանական հանձնաժողովի հայտարարությունը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի միջխորհրդարանական հանձնաժողովը,

**Ընդգծելով** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման և կազմավորման գործընթացի լիովին և անթերի համապատասխանությունը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին ու նորմերին և այն ժամանակ դեռևս գործող ԽՍՀՄ օրենսդրությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ որպես Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման երաշխավոր լինելու իրողությունը,

**Արձանագրելով**, որ՝ ի պատասխան Արցախի ժողովրդի ազատ կամարտահայտության՝ Արցախը որդեգրեց Եթևիկ գտումների և ուժային մեթոդներով հարցի լուծման քաղաքականություն, որը շարունակվում է ցայսօր,

**Համոզված լինելով**, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչումը կապահովի ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի անընդմեջ իրականացումը և Արցախի համար կհանդիսանա ուժի և ուժի սպառնալիքի կիրառման անթույլատրելիության ազդանշան,

**Հաշվի առնելով**, որ 1994 թ. մայիսի 12-ին ուժի մեջ մտած Լեռնային Ղարաբաղի, Արցախի և Հայաստանի կողմից ստորագրված հրադադարի մասին համաձայնությունը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում խիստ կարևոր ձեռքբերում է, որը հնարավոր դարձավ Արցախի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանագծից դիպուկահարների հետ քաջման, միջադեպերի հետաքննության, և ժողովուրդների միջև առեւտրային սերմանող հայտարարությունների ու գործողությունների բացառ-

կարգավորմանը՝ **ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Ե** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև հակամարտության վերջնական կարգավորման գրավական հանդիսացող հրադադարի ռեժիմի ամրապնդման անհրաժեշտության և խաղաղ գործընթացի անընդմեջ իրականացման կարևորության մասին, **ԿՈՉ Ե ԱՆՈՒՄ ԵԱՅԿ** Մինսկի խմբի հա-

ման ուղղությամբ, **ՀԱՍՏՈՂՈՒՄ Ե** հայտնում, որ հայ ժողովուրդը՝ Հայաստանում, Արցախում և ի սփյուռք աշխարհի, ինչպես և նախկինում, կգործադրի իր ողջ ներուժը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի՝ ՄԱԿ-ի կանոնադրությամբ և միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերով երաշխավորված ինքնորոշման իրավունքն ու անվտանգու-



մանախազահ երկրներին՝ գործնական քայլեր ձեռնարկել Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանագծից դիպուկահարների հետ քաջման, միջադեպերի հետաքննության, և ժողովուրդների միջև առեւտրային սերմանող հայտարարությունների ու գործողությունների բացառ-

թյունն ապահովելու համար: **ԴԻՄՈՒՄ Ե** Մինսկի խմբի համանախազահներին՝ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք մասնակցության ապահովմանը բանակցային գործընթացի բոլոր փուլերին:

ՍԵՒ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### Նոր Էրբեջում զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշարձան բացվեց



Արցախի Շահումյանի շրջանի Նոր Էրբեջ գյուղում օրերս բացվեց Էրբեջի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշարձան:

22 տարի առաջ նախկին Շահումյանի շրջանի Էրբեջ գյուղի բնագավառում հետո պատմական Վայկունիցում (Քարվաճառ) հիմնադրված Նոր Էրբեջ գյուղում Էրբեջցիները ապրում են հույսով, որ կրկին կվերագրանան իրենց հայրենի գյուղ, իրենց հայրենի տներ: Սակայն Էրբեջցիները իրենց Նոր գյուղում կառուցում են Նոր տներ ու վառ պահում հայրենի հողի համար մղված պայքարում ընկած իրենց համագյուղացիների հիշատակը:

Ինչպես Էրբեջցիներն են ասում՝ Նորակառույց հուշարձանը կդրված է վառ պահելու զոհված ազատամարտիկների հիշատակը, որպեսզի նրանց սիրանքը չմոռացվի: Հուշարձանը յուրօրինակ ձևով կապում է գյուղի անցյալն ու ներկան:

Էրբեջի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշարձանի բացման արարողությանը ներկա էին նաև ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամները:

### Եվրախորհրդարանի փոխնախագահն այցելել է Արցախ

Եվրախորհրդարանի փոխնախագահ Յացեկ Պրոտասեիչը հունիսի 22-ին այցելել է Արցախ և հանդիպում է ունեցել Արցախի նախագահ Բակո Սահակյանի հետ: Ինչպես տեղեկացնում են ԼՂՀ նախագահի տեղեկատվության գլխավոր վարչությունից՝ հանդիպման ժամանակ քննարկվել են Արցախ-Եվրոպա կապերի, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի և տարածաշրջանային զարգացումների վերաբերող հարցեր: Նախագահ Սահակյանն ընդգծել է, որ պաշտոնական Ստեփանակերտը կարելի է Եվրախորհրդարանի և Եվրոպական այլ կառույցների հետ հարաբերությունների հաստատումն ու շարունակական ամրապնդումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով դրանք ինստիտուցիոնալ դարձնելու հարցերին: Հանդիպմանը մասնակցում էին ԼՂՀ արտգործնախարար Կարեն Միրզոյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Թեան Պողոսյանը, Հայաստանի Եվրոպացի բարեկամներ կազմակերպության տնօրեն Էդուարդ Լորենց Օչոյան:

ման որեւէ տարբերակ, որն ընդունելի կլինի ժողովրդի համար»,-նշեց Պրոտասեիչը: Այն հարցին, որ Արցախում ապրող ժողովրդի համար անընդունելի են Մադրիդյան սկզբունքները, այդ դեպքում ինչպես կարող է խոսք գնալ Մադ-

վորման համար առաջարկվող լուծումները պիտք է առաջին հերթին ընդունի ժողովուրդը:

Լրագրողներին հետաքրքրում էր նաև, թե Եվրախորհրդարանի փոխնախագահին չի՞ մտահոգում ադրբեջանա-



րիդյան սկզբունքների մասին՝ Պրոտասեիչը նշեց, որ դրանք, այնուամենայնիվ, հնարավորություն են տալու ժողովրդին իրենց կարծիքն ու կամքն արտահայտելու, ինչն ամենակարևորն է: «Թող ժողովուրդը խոսի, արտահայտի իր կարծիքը, որից հետո մենք կանենք համապատասխան հետեւություններ»,- պատասխանեց Եվրախորհրդարանի փոխնախագահը: Նա նաև հավելեց, որ դա են պահանջում ժողովրդավարության սկզբունքները, որովհետեւ առկա հիմնախնդիրների վերջնական կարգա-

կան «սե ցուցակում» հայտնվելու հանգամանքը: Պրոտասեիչը նշեց, որ դրան հանգիստ է վերաբերում: «Ես արդեն 30 տարի է՝ քաղաքականության մեջ եմ և պաշտպան եմ տարբեր վարչակարգերի ժամանակ, երբ ինձ կարող էին նույնիսկ բանտ նստեցնել: Բայց ես ունեմ իմ սկզբունքները, որոնցով առաջնորդվում եմ, և այդ առումով՝ ինձ ոչինչ չի անհանգստացնում»,- նշեց Եվրախորհրդարանի փոխնախագահը:

ՍԵՒ ԱՆՍՏԱՆ

### 2014թ. հոկտեմբերը Եվրոպայում «Արցախի ամիս» է հռչակվել



ՀՀ Եվրոպայի Հայ Դատի հանձնախումբը 2014-ի հոկտեմբերը Եվրոպական երկրներում հայտարարելու է «Արցախի ամիս»: Բելգիայի, Նիդերլանդների, Ֆրանսիայի և Գերմանիայի Հայ Դատի հանձնախմբերի, ինչպես նաև Արցախի ներկայացուցչությունների համագործակցությամբ կիրականացվեն տարբեր միջոցառումներ և ցուցադրություններ:

Հայաստանի, Արցախի և այլ երկրների արվեստագետների, մտավորականների մասնակցությամբ ամբողջ հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղի կունենան գրքերի շնորհանդեսներ, նկարչական և այլ ստեղծագործական ցուցադրություններ, ֆիլմի ներկայացումներ: Արցախում զինադադարի քսանամյակի առիթով Եվրոպայի Հայ Դատի հանձնախումբը շրջանային հանձնախմբերի հետ միջազգային հանրության և քաղաքական շրջանակների ուշադրությանը կներկայացնի, որ Արցախի Հանրապետությունն այսօր կայացած ու ստեղծագործող պետություն է, որի հետ պետք է հաշվի նստեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումներ առաջարկող կողմերը:

Այս մասին հարցրում է ՀՀ Եվրոպայի Հայ Դատի հանձնախումբը:

«ԱՊՍՈՍԺ»

# Ալիեի արկածները Ստրասբուրգում՝ տիան միջադեպով

Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) ամառային նստաշրջանում Ելույթ էր ունեցել Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիեյևը։

Ադրբեջանի նախագահը Ելույթ է ունեցել որպես մի երկրի ղեկավար, որը կես տարով ստանձնել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահությունը։

Մինչ այդ՝ ԵՆԽՎ-ում ադրբեջանական պատվիրակությունը փորձել է բանաձեռնի նախագիծ մտցնել՝ պատճառաբանելով, թե իբր ադրբեջանական տարածքներն օկուպացված են հայկական ուժերի կողմից, առաջարկելով՝ հայկական պատվիրակությանը գրկել ձայնի իրավունքից։ Սակայն այս նախաձեռնությունը տապալվել է, փոխարենը 37 կողմ, 32 դեմ ձայների հարաբերակցությամբ ընդունվել է Ադրբեջանում քաղաքատարկյալների առկայության մասին բանաձեռնի նախագիծը։

ԵՆԽՎ-ում Ադրբեջանի նախագահի Ելույթի ժամանակ դահլիճ են ներխուժել սեւ ժապավենով փակած բերաններով ու կրծքներին քաղբանտարկյալների նկարներ փակցված՝ Ադրբեջանի քաղաքացիական հասարակության մի խումբ ներկայացուցիչներ, ովքեր Ալիեի Ելույթի ողջ ընթացքում մնացել են դահլիճում եւ հավանության նշաններ են արել, երբ հարցերը վերաբերել են քաղբանտարկյալներին, բանտարկված լրագրողներին, նաեւ՝ Լեյլա Յունուսին։

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) ամառային նստաշրջանում Ելույթ էր ունեցել Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիեյևը։

Ադրբեջանում գեներալին հավասարության ցուցանիշն անվանել են սարսափելի։ Սակայն Ալիեի պատասխաններից կարելի է եղել ենթադրել, որ Եվրոպական երկրներում վիճակն ավելի սարսափելի է, քան Ադրբեջանում, քանի որ նա անընդ-



նարար ազատությունների խախտումներին։

Եվրոպայի խորհրդարանական վեհաժողովում Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիեյևն ուղղված՝ այդ երկրում քաղբանտարկյալների մասին հարցը ողջունել են Եվրոպայի պատվիրակների ծափերով։

Եվրոպացի պատգամավորներն

հատ հակադարձել է պատվիրակներին։ «Միգուցե այդպես է ձեր երկրներում։ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների հետ կապված՝ մեր երկրի վիճակը չի տարբերվում ձեր երկրների վիճակից», - պատասխանել է Ալիեյևը։

Սեփ.ԼՐԱՍՎՈՒԹՅՈՒՆ

# Նավարայի խորհրդարանը ճանաչել է Յայոց ցեղասպանությունը

Յիմնականում բասկերով բնակեցված Իսպանիայի Նավարա ինքնավար տարածաշրջանի խորհրդարանը ճանաչել է Յայոց ցեղասպանությունը։

Յայոց ցեղասպանության ճանաչման մասին հռչակագիրը Նավարայի խորհրդարանն ընդունել է հունիսի 23-ին։

Փաստաթղթում ասվում է, որ ըստ 1987թ. հունիսի Եվրոպայի խորհրդարանի բանաձեռնի, ինչպես նաեւ՝ դրան հաջորդած 2002 թ. փետրվարի 28-ի եւ 2004 թ. ապրիլի 1-ի բանաձեռների համաձայն՝ հայ ժողովրդի ողբերգությունը ցեղասպանություն է։ Նավարայի խորհրդարանի ընդունած հռչակագիրը դատապարտում է թուրքական ռեժիմի քաղաքականությունն ու կոչ է անում Թուրքիային դիվանագիտական հարաբերություններ հաստատել Յայաստանի հետ, ներդաշնակ բարիդրացիական ոգով եւ խաղաղ ճանապարհով լուծել սահմանի հարցը։ Փաստաթղթում նաեւ ասվում է, որ հաշվի առնելով Թուրքիայի կարգավիճակը՝ որպես ԵՄ անդամակցության թեկնածու, այս երկու հարցը անհապաղ լուծման կարիք ունի։

«Որքան մոտենում է Յայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը, այնքան պարզ է դառնում, որ նման հայտարարությունները ցուցադրում են Եվրոպայի համերաշխությունը հայ ժողովրդի հետ։ Մենք հպարտ ենք, որ մեր համառ աշխատանքի շնորհիվ Եվրոպայում շահագրգիռ կողմերն ավելի հաճախակի են գիտակցում այդ հարցի կարեւորությունը», - հայտարարել է EuFoA տնօրեն Էդուարդո Լորենցո Օչոան։

Նավարան Իսպանիայի չորրորդ ինքնավար տարածաշրջանն է, որը ճանաչեց Յայոց ցեղասպանությունը։ Ցեղասպանության փաստը ճանաչել են նաեւ Բասկերի երկիրը, Կատալոնիան ու Բալեարյան կղզիները։

«ԱՊՍՈՍԺ»

# Մանրամասներ Բաքվում անցկացված ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նիստից

Բաքվում մեկնարկել է ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նիստը։ Մշտական հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել առավոտյան, Ելույթ են ունեցել ԵԱՀԿ ԽՎ նախագահ Ռասնկո Կրիվոկապիչը եւ գլխավոր քարտուղար Սպենսեր Օլիվերը։

Յայաստանի 5 հոգանոց պատվիրակությունը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում մեկնել է Բաքու։ Պատվիրակության կազմում են ԱԺ ԶՅԴ խմբակցության քարտուղար Աղվան Վարդանյանը, ԱԺ ԶԿ խմբակցության պատգամավոր Արտաշես Գեղամյանը, ԲԿ խմբակցության պատգամավոր Ստեփան Մարգարյանը, ԱԺ միջազգային բաժնի ներկայացուցիչ Անահիտ Գասպարյանը եւ ԱԳՆ-ից՝ Վահե Գեւորգյանը։

Ադրբեջանական լրատվամիջոցը նշում է, թե Բաքվում ընթացող՝ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի հայաստանյան պատվիրակությունը «Յեյսինկի+40. հանուն յուրաքանչյուր անձի անվտանգության» անվամբ բանաձեռնում առաջարկել է ուղղում կատարել՝ կապված «ազգերի ինքնորոշման վերաբերյալ» դրույթի հետ, սակայն նրա առաջարկը պատվիրակները դիմավորել են դժգոհության աղմուկով, եւ իբր գեկույցի հեղինակ՝ սերբ պատգամավոր Գորդանա Կոմիչը Գեղամյանին ասել է, թե նրա առաջարկը չի համապատասխանում տվյալ փաստաթղթին, ու խնդրել է չխախտել նիստի կանոնակարգը։

Yerkir.am-ի հետ զրույցում, սակայն, Բաքվում հայկական պատվիրակության կազմում եւ հենց կոնկրետ այս հանձնաժողովի աշխատանքներում ընդգրկված Աղվան Վարդանյանը հայտնեց, որ նման բան չի եղել։ Նա ադրբեջանական այս «տեղեկատվություն» «ամբողջությամբ սուտ» որակեց եւ նշեց, որ տրամաբանորեն էլ դա չի կարող այդպես լինել։ «Այդ

խոսակցությունները, վերջին նախադասությունը լրիվ սուտ են։ Այդպիսի բաներ, առհասարակ, չեն ել լինում, այսինքն՝ ընդամենը քվեարկվել է, ընդ որում՝ քվեարկվել է երկու անգամ։ Իսկ ինչ գրում է ադրբեջանական լրատվամիջոցը, թե իբր՝ այդ ուղղման տեղը չէ, կամ՝ դժգոհության աղմուկ եւ այլն, ամբողջությամբ սուտ է», - ասաց Աղվան Վարդանյանը։

Եղելությունը ներկայացնելով՝ ԱԺ ԶԿԴ խմբակցության քարտուղարը պատմեց, որ արձանագրությունների նախագծերը կան, եւ սովորաբար յուրաքանչյուր պատվիրակություն կարող է փոփոխու-



թյունների առաջարկություններ ներկայացնել։ Յայկական պատվիրակությունը՝ դեռեւս մինչեւ Բաքու մեկնելը Երեւանից է առաջարկություն արած եղել, որ արձանագրության երկրորդ կետում հավելվեն Յեյսինկյան ակտի՝ ժողովուրդների իրավահավասարության եւ ազգերի ինքնորոշման իրավունքի դրույթները։ «Այդ գեկույցում ամրագրված չէ նաեւ տարածքային ամբողջականության սկզբունքը, բայց քանի որ հարցը վերաբերում էր

մարդու իրավունքներին, մենք առաջարկել ենք, որ ազգերի ինքնորոշման իրավունքն ու ժողովուրդների իրավահավասարության իրավունքը ավելացվեն գեկույցի երկրորդ կետում», - ներկայացրեց Աղվան Վարդանյանը։ Յայկական կողմի առաջարկությունը դրանից հետո դրվել է քվեարկության եւ ձայների՝ 22 «դեմ», 20 «կողմ» հարաբերակցությամբ չի անցել։

Թեւեւ հայկական կողմի առաջարկությունը չի անցել, բայց անգամ այդ տեսքով այդ գեկույցը, ըստ Վարդանյանի, Յայաստանի Յանրապետության համար վտանգ չի պարունակում, քանի որ այն-

ներն են քննարկվում ու քվեարկության դրվում, այնպես որ՝ ոչ ոք հայկական կողմին չէր կարող ասել, որ նման նախաձեռնությամբ հանդես գալու տեղը չէ, կամ դա հակասում է կանոնակարգին, ընդհակառակը։ Ու քանի որ յուրաքանչյուր պատվիրակություն իրավունք ունի գեկույցի ու արձանագրության վերաբերյալ փոփոխությունների առաջարկությամբ հանդես գալու, որոշակի ձայներ ստացած առաջարկություններն անպայման ընդգրկվում են քննարկումներում ու դրվում քվեարկության։ Իսկ թե ով կամ ինչու խանգարեց հայկական պատվիրակության առաջարկի հաստատմանը՝ Աղվան Վարդանյանը պարզաբանեց, որ, սովորաբար, ով գեկույցը պատրաստել ու նախնական արձանագրությունը կազմել է, նա է արտահայտում իր դիրքորոշումը՝ կողմ է որդեւ առաջարկի, թե՞ դեմ, ու եթե դեմ է լինում, հիմնականում այդ առաջարկը չի քվեարկվում։ Այս դեպքում գեկույցի ու նախագծի հեղինակ սերբ պատվիրակ Գորդանա Կոմիչը դեմ է եղել հայկական կողմի առաջարկին։

«Երկու անգամ դրվեց քվեարկության ու երկրորդ անգամ հավաքեց 20 «կողմ» ու 22 «դեմ»։ Նույնիսկ մենք չէինք էլ սպասում, թե դրանից հետո այդքան կողմ ձայներ կհավաքեմք», - ընդգծեց Աղվան Վարդանյանը։

Ի դեպ, Բաքվում դարձյալ բողոքի ցույց է տեղի ունեցել՝ ընդդեմ հայ պատգամավորների. հայտնում է haqqin.az-ը։ Ակցիայի մասնակիցներն իրենց բողոքն են հայտնել հայ պատգամավորների՝ Բաքվում ընթացող՝ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովին մասնակցելու կապակցությամբ։ Հաղորդվում է, որ կան ձերբակալվածներ։

Սեփ.ԼՐԱՍՎՈՒԹՅՈՒՆ



# Արցախում կայացավ արցախյան պատերազմի մասին պատմող «Թեւանիկ» ֆիլմի պրեմիերան

Հունիսի 20-ին՝ Ստեփանակերտի «Սոֆիա» առևտրի կենտրոնի կինոսրահում ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Թեւանիկ» հայ-լիտվական արտադրության գեղարվեստական ֆիլմի պրեմիերան:

Ֆիլմի ցուցադրությանը ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, բարձրաստիճանի պաշտոնյաներ, քաղաքացիներ:

«Թեւանիկ»-ը դրամատիկական պատմություն է՝ բաղկացած երեք մասից: Յուրաքանչյուր մաս պատմում է երեք պատանիների՝ Արամի, Աստղիկի և Թեւանիկի մասին, որոնց պատանեկությունն ընդհատել էր դաժան պատերազմը: Դեպքերը տեղի են ունենում նույն գյուղում և միաժամանակ: Պատմությունները սկսվում են գրեթե զուգահեռ և ավարտվում, երբ սկսվում է մեծ գրոհը գյուղի վրա: Ֆիլմում ամեն մի դերասան մարմնավորում է մարդկային մի ճակատագիր: Ֆիլմի երրորդ մասի սցենարի հեղինակը Առնոլդ Աղաբաբովն է, մյուս երկու ֆիլմերի սցենարի հեղինակը՝ դրամատուրգ, սցենարիստ Կարինե Խոջիկյանը: Ամբողջ ֆիլմի հիմքում ընկած է Առնոլդ Աղաբաբովի «Թեւանիկ» սցենարը: Ֆիլմի հիմնական լեզուն Արցախի բարբառն է:

«Թեւանիկ» ֆիլմի պրոդյուսեր Մասիս Բաղդասարյանի հավաստմամբ՝ գեղարվեստական պատմության միջոցով ցանկացել են աշխարհին ներկայացնել Արցախը:

«Արցախում կամ Հայաստանում ֆիլմ ստեղծելը շատ դժվար է, եւ, առհասարակ, ֆիլմ հանել միջազգային ասպարեզ՝ դա նույն բանն է, ինչպես ասելը մակույկով դուրս գալ փոթարկվող ծով: Ես իմ ֆիլմով պատմում եմ ոչ միայն Ղարաբաղի, այլև պարզապես մարդու մասին, նրա հոգեկան ապրումների ու վիճակի մասին: Ֆիլմի հերոսներին կարելի է փնտրել իրական կյանքում, որոնց միջոցով ես ուզում էի պատմել պատերազմական ժամանակների ու մարդկանց ճակատագրերի ու խաղաղության մասին»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց ֆիլմի ռեժիսոր Ջիվան Ավետիսյանը:

Արցախում, ինչը ֆիլմի ռեժիսորի հավաստմամբ՝ իրենց համար սպասելի է եղել. «Ֆիլմը պատրաստելուց համոզված էի, որ այն արձագանք կգտնի աղբյուրների կողմից, քանզի խոսել Արցախի մասին եւ աղբյուրների կողմից որեւէ արձագանք չլինի՝ դա պարագրեսի նման մի բան կարելի է համարել: Բայց չէի սպասում, որ Արցախում մեկ անգամ բողոքի նոտա կհղի Լիտվայի կառավարությանը համատեղ արտադրության համար եւ մեկ անգամ էլ բողոքի ակտ կբարձրացնի Կաննում եւ ֆիլմի ցուցադրության, եւ հաջորդ նախագիծը ներկայացնելու համար»,- նշեց Ջիվան Ավետիսյանը:



Ռեժիսորի հավաստմամբ՝ ֆիլմը նկարահանվել է միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան: «Մենք Կանն գնացել էինք երկու նպատակով,- տեղեկացրեց ֆիլմի ռեժիսորը,- առաջինը՝ Թեւանիկի ցուցադրություն

ըր, որպեսզի «Թեւանիկ» համար գտնենք փառատոնների ներկայացուցիչներ, ովքեր կդիտեն ֆիլմը եւ կարձագանքեն, եւ երկրորդ՝ ներկայացրինք նոր նախագիծը, որի համար փորձում էինք գտնել օտարերկրյա համարտադրողներ»:

Ջ. Ավետիսյանի հավաստմամբ՝ Կաննի կինոշուկայի դահլիճը, որտեղ պետք է ցուցադրվեր ֆիլմը, 43 ստատեղ է ունեցել, սակայն ֆիլմը դիտելու համար 50-ից ավել մարդ է ներկա եղել. «Այն, որ ֆիլմի ցուցադրությանը նախատեսված շատ մարդ է ներկա եղել, դա խոսում է այն մասին, որ մինչ կինոշուկան՝ մենք բավական լավ ենք աշխատել եւ ամիսներ շարունակ նամակագրության մեջ ենք եղել մարդկանց հետ: Եվ արդյունքում՝ կարողացել ենք եւ հանդիպումներ կազմակերպել, եւ հրավիրել ֆիլմի ցուցադրությանը: Իրականում Կաննում շատ բարդ է 50 հոգի հավաքելը, քանզի հազարավոր ֆիլմեր են ցուցադրվում»:

Երիտասարդ ռեժիսորը տեղեկացրեց, որ հաջորդ նախագիծը հետ կապված՝ Կաննի կինոշուկայում որոշ մարդկանց հետ քննարկումների շրջանակները լայնատեսք են, ինչը կարելի է դրական քայլ համարել:

Ջիվան Ավետիսյանը կարելու է Արցախյան գոյամարտի մասին ֆիլմեր նկարահանելը եւ այդ ֆիլմերի միջոցով աղճատված կյանքեր ներկայացնելը: Ռեժիսորի խոսքերով՝ այդ ֆիլմերը հնարավորություն են ստեղծում, որպեսզի մեր երկրի սահմաններից դուրս ապրող մարդիկ, օտար ազգերի ներկայացուցիչները գոնե հասկանան, թե ինչ է իրականում իրենից ներկայացնում Արցախյան ազատամարտը:

«Մենք Կանն գնացել էինք երկու նպատակով,- տեղեկացրեց ֆիլմի ռեժիսորը,- առաջինը՝ Թեւանիկի ցուցադրություն

ըր, որպեսզի «Թեւանիկ» համար գտնենք փառատոնների ներկայացուցիչներ, ովքեր կդիտեն ֆիլմը եւ կարձագանքեն, եւ երկրորդ՝ ներկայացրինք նոր նախագիծը, որի համար փորձում էինք գտնել օտարերկրյա համարտադրողներ»:

ՍԻՒ ԱՍՏՅԱՆ

## Չավարյանականներին Արցախ է բերել հայրենի հողի կանչը

Արցախից պատանիներն անհամբերությամբ են սպասում ամառային արձակուրդներին, քանզի հենց այդ ժամանակահատվածում է, որ Արցախում Սփյուռքից ժամանած երիտասարդները կազմակերպում են երկշաբաթյա, երբեմն նաեւ երեք շաբաթ տևողությամբ ճամբարներ:

Արդեն 10 տարի է, ինչ Լիբանանի Չավարյան ուսանողական միությունը (ՉՈՍ) Արցախում իրականացնում է տարբեր ծրագրեր, այդ թվում նաեւ՝ կազմակերպում է պատանեկան ճամբարներ, որին մասնակցում են 9-16 տարեկան պատանիներ: «Չավարյան» ուսանողական միության կողմից կազմակերպված ճամբարների աշխարհագրությունը շատ հստակ է. նրանք 10 տարի շարունակ գործունեություն են ծավալում եւ ճամբարներ են կազմակերպում Քաշաթաղի շրջանի տարբեր համայնքներում:

Ճամբարների կազմակերպումն Արցախում եւ առհասարակ հայրենիքում՝ իրենց դրական ազդեցությունն են ունենում ոչ միայն տեղի երիտասարդների եւ պատանիների, այլև՝ ոչ պակաս դեր ու նշանակություն են ունենում սփյուռքահայ երիտասարդների համար. նրանցից շատերը հայրենիք են գալիս առաջին անգամ:

«ՉՈՍ-ը այս 10 տարիների ընթացքում ճամբարներ է կազմակերպել հիմնականում Քաշաթաղի շրջանում»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց Լիբանանի Կենտրոնական կոմիտեի անդամ եւ

ՉՈՍ-ի պատասխանատու Լեւոն Ավետանյանը եւ հավելեց,- 2013 թվականին Լիբանանի «Չավարյան» ուսանողական միությունը ճամբարներ է կազմակերպել Մոշաթաղում, Տիգրանավանում, Սարաթաղում եւ Այգեհովիտում: Վերջին տասնամյակում ՉՈՍ-ը ճամբարներ է կազ-



մակերպել Հայաստանում եւ Արցախում: Միությունը վերջին տարիներին ճամբարներ է կազմակերպում Քաշաթաղի շրջանում: Յուրաքանչյուր տարի առնվազն երկու կամ երեք համայնքում կազմակերպում ենք ճամբարներ: Լիբանանում մեր տարեկան աշխատանքների պլանավորման ժամանակ մեծ ուշադ-

րություն ենք հատկացնում հենց ճամբարների կազմակերպման ծրագրին, եւ այդ ծրագիրը շարունակական բնույթ է կրելու: Այս տարի ճամբարներ կկազմակերպվեն Հայաստանի Կոտայքի մարզում եւ Բերձորում:

Սփյուռքի մեր հայրենակիցների կող-

րին բաժանվում են շապիկներ, որոնց վրա պատկերված է լինում տվյալ տարվա ճամբարի խորհրդանիշը: Ճամբարի առօրյան հագեցած է լինում ուսուցողական պարապմունքներով: Սփյուռքի երիտասարդները համակարգիչ, պատմություն, անգլերեն եւ այլ նյութեր են ուսուցանում արցախցի պատանիներին: Նրանք նաեւ իրենց փորձն են փոխանցում տեղի պատանիներին: Եվ, ամենակարևորը, ճամբարների արդյունքում կապ է ստեղծվում Չավարյանականների եւ Քաշաթաղի շրջանի երեխաների միջև: Քաշաթաղում ամեն տարի անհամբերությամբ են սպասում Չավարյանականների այցերին եւ կազմակերպվող ճամբարներին: Եվ ամեն տարի, երբ նոր խումբ է այցելում Արցախ, երեխաները անուններով հիշում են նախորդ տարիների կազմակերպիչներին եւ հարցնում բոլորի մասին: Առհասարակ, Արցախի հետ կապված մեր ծրագրերը մինչ օրս սահմանափակվել են ճամբարների կազմակերպմամբ, բայց, կարծում եմ, զուգահեռ այլ ծրագրեր եւս կմշակվեն՝ Արցախում կյանքի կոչվելու համար»:

Լեւոն Ավետանյանի խոսքերով՝ Չավարյանականներին Արցախ է բերել հայրենի հողի կանչը. «Հայրենի հողի կանչն է Չավարյանականներին Արցախ բերել: Եւ հենց դա է պատճառը, որ արդեն 10 տարի է, ինչ նրանք մեծ եռանդով ու խանդավառությամբ են սպասում ամռանը, որ գան Արցախ»:

Ս. ԱՍՏՅԱՆ

Քաղաքակենտրոնացումը (ուրբանիզացիան) եւ մարդը

Մարդն ամուր կապերով կապված է շրջապատի հետ եւ կազմում է բնության բաղկացուցիչ մասը:

Երկրի վրա բնակչությունը խիստ անհավասարաչափ է բաշխված: Արդյունաբերության կենտրոնացումը քաղաքներում զգալի չափով մեծացնում է ազգաբնակչության կուտակումը: Քաղաքակենտրոնացումը (ուրբանիզացիա) մարդկային հասարակության վրա թողնում է հասարակական-տնտեսական, սոցիալ-կենցաղային եւ կուլտուրական ազդեցություն, դրական է ազդում նրա մտավոր զարգացման վրա, հնարավորություն է տալիս անհատի մասնագիտական ու ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Մյուս կողմից, մարդը հեռանում է բնությունից եւ ընկնում վնասակար ազդեցությունների միջավայր, որի հետեւանքով աճում է տարբեր հիվանդությունների թիվը: Քաղաքակենտրոնացումը ստեղծում է նոր էկոլոգիական միջավայր, ուր ավելանում են բացասական գործոնները: Դրանցից առավել գերակշռող են տեղեկատվական, մտավոր եւ սոցիալական լարվածությունը, աղմուկը, սակավաշարժությունը եւ այլն:

վանդությունների թիվը, որոնք հաճախ ուղեկցվում են այնպիսի ընդհանուր փոփոխություններով, ինչպիսիք են ախորժակի կորուստը, մկանային թուլությունը, արյան ճնշման բարձրացումը:

Միջավայրի աղտոտվածությունը եւս տարբեր հիվանդությունների զարգացման հիմնական պատճառ է հանդիսանում: Գիտատեխնիկական հեղափոխությունը, արդյունաբերության անսխալ թաց զարգացումը քաղաքներում զգալի

կաթիլներ եւ այլն: Ծծմբային գազի եւ օդի խոնավությունից առաջանում են ծծմբական թթուներ, որոնք թթվային անձրեւների առաջացման պատճառ են հանդիսանում:

Քաղաքների մթնոլորտի աղտոտվածության հիմնական պատճառներից մեկը վառելանյութով աշխատող փոխադրամիջոցներն են: Ավտոմեքենաները հանդիսանում են 10-25% հիվանդությունների առաջացման պատճառ:



չափով աղտոտում են օդը տարբեր արտանետուկներով: Խոշոր քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների գազային եւ փոշու արտանետումները, կենցաղային թափոնները թունավորում են շրջապատը տարբեր քիմիական տարրերով, որոնք օրգանիզմ են ներթափանցում հիմնականում շնչառական ուղիներով:

Մթնոլորտն աղտոտում են էլեկտրակայանները, գործարանները, բնակելի շենքերը, որոնք օդ են արտանետում ծծմբի օքսիդ, մուր, մոխիր, ծծմբաթթվի

Գիտական առաջընթացը պատճառ է նաեւ սակավաշարժության, որը «քաղաքակրթության հիվանդության» առաջացման պատճառ է: Սակավաշարժության պատճառով կմախքային մկաններն ու սիրտը ավելի քիչ են մարզվում: Դեղատարար, ցանկացած ծանրաբեռնվածություն սրտի վրա կարող է ազդել որպես արտակարգ գործոն եւ նպաստել որոշ հիվանդությունների առաջացմանը: Խմելու ջրի աղտոտվածությունը նույնպես զարգացող քաղաքակրթությանն ուղեկցող գործոններից է:

Քաղաքներում բարձր է նաեւ աղմուկի մակարդակը, որը նպաստում է մի շարք հիվանդությունների զարգացմանը՝ արյան ճնշման բարձրացում կամ իջեցում, կյուբափոխանության, ներզատիչ գեղձերի եւ արյան շրջանառության հիվանդություններ: Աղմուկը միջավայրում ապրող մարդկանց արյան մեջ ավելանում է խոլեստերինի քանակությունը, նկատվում է թուլության համախտանիշ: Մտուկը նույնպես իր հերթին կարող է հանդիսանալ օրգանիզմի աղտոտման աղբյուր: Քաղաքների մոտակայքում աճեցվող գյուղատնտեսական մթերքներն աղտոտվում են տարբեր պարարտանյութերով, որոնք քանակը հաճախ գերազանցում է բնական մակարդակը: Շատ վնասակար են մեծ տարածում ստացած արհեստական հավելումներով հագեցած սննդամթերքները:

Սակայն, կարելի է նշել նաեւ այն փաստը, որ գիտատեխնիկական առաջընթացի եւ հասարակության սոցիալական զարգացման յուրաքանչյուր փուլ մարդկության պատմության մեջ լավացրել է կյանքի պայմանները եւ երկարակենցությունը, բարձրացրել է ազգաբնակչության քանակության վերին շերտը: Այս ամենն իրականանում է բժշկության եւ այլ բնագավառներում ձեռք բերված հաջողությունների շնորհիվ: Այսպես, ամենաբարձր կյանքի տեւողությունը հանդիպում է Ֆրանսիայում, Ճապոնիայում եւ Իսլանդիայում՝ 80 տարի, իսկ ամենացածրը Չադում՝ 39 տարի:

Քաղաքակենտրոնացված վայրերում բարձր է նաեւ կրթության մակարդակը, որի շնորհիվ բարձր է նման վայրերում ապրող մարդկանց ինտելեկտը: Գոյություն ունեն գործելու լայն մտահորիզոններ, որոնց շնորհիվ կատարվում են կյանքի համար խիստ անհրաժեշտ նոր հայտնագործություններ:

Մանուշ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Աֆորիզմներ

- \*\*\*
Երբ տղամարդը կարիքավորին օգնելու խոստումը չի կատարում, թե Աստծո առաջ է մեղք գործում, թե իր պատիվն է ոտնահարում:
\*\*\*
Իրավացի լինելը դեռեւս ոչինչ չի նշանակում, եթե չես կարող ապացուցել:
\*\*\*
Ով արդար է, ազնիվ ու բարի՝ սովորաբար լավ մարդ է համարվում:
\*\*\*
Երբ չիմացողն է իմացողին կառավարում, անխորհուրդներին բացի այլ արդյունք սպասելն իզուր է:
\*\*\*
Ամեն մի գործի որակ բնութագրում է դրա իրականացնողի մարդկային որակը:
\*\*\*
Բարյակամտության դեֆիցիտը երբեմն արմատավորվում է որպես անբարյակամության արատ:
\*\*\*
Չկա ավելի քստմնելի, տգեղ ու նսեմացնող բան, քան այն, երբ անգործի, անպաշտպանի նկատմամբ օրինախախտումներ, կամայականություններ է գործադրվում:

- \*\*\*
Մարդ կա՝ օրինապաշտություն քարոզելով օրինախախտողներին է հովանավորում:
\*\*\*
Անտարբերությունը հոգու անբուժելի արատ է:
\*\*\*
Անազնիվ միջոցներով ձեռք բերված ճոխությունը երջանկություն չի պարգևում:
\*\*\*
Ուժեղի կողմից թուլին ճնշելը նույնքան հին ու հավիտենական է, որքան արդարության համար պայքարը:
\*\*\*
Ձեռք բերված ազատության առաջին ցուցանիշը արդարության հարթաճանկն է համարվում:
\*\*\*
Սուտ ասելն ամոթի ու խղճի զգացումի բացակայության նշան է:
\*\*\*
Սուտ ասողը չունի ոչ ամոթի, ոչ խղճի զգացում:
\*\*\*
Արդարությանն ու ճշմարտությանը անձնվիրաբար ծառայում են հոգով ու մտքով խի-

- զախները:
\*\*\*
Անարդարությունը ոչ միայն դժգոհություն, այլ նաեւ մեծ ատելություն է առաջացնում:
\*\*\*
Ժամանակը վերքեր է բուժում, բայց նոր վերքեր էլ է առաջացնում:
\*\*\*
Մարդիկ կյանքի դժվարություններին դիմակայում են ոչ միայն տոկոսությամբ ու գործիմացությամբ, այլ նաեւ պատրանքներով:
\*\*\*
Երբ ճշմարտությունն ու մտերմությունը տարբեր բեւեռներում են հայտնվում, խոհեմն ընտրում է ճշմարտությունը:
\*\*\*
Անազնիվ մարդուն հովանավորողն ազնիվ լինել չի կարող:
\*\*\*
Չովանավորվող օրինախախտների գոհերն անպաշտպան արդարներն են լինում:
\*\*\*
Սեփական ուժերը գերազանցատել ավելի է վտանգավոր, քան թերազնահա-

- տելը:
\*\*\*
Քննադատություն չեն սիրում նրանք, ովքեր սխալներն ուղղելու ընդունակությունից զուրկ են:
\*\*\*
Մարդ կա՝ շարունակ սրբությունների, ապաշխարհանքի մասին է խոսում, միաժամանակ մերձավորին հարվածում թիկունքից:
\*\*\*
Փառք նրան, ով հոգով կողոպտված մարդ արարածին ապավինում, փրկում է կործանումից:

Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Յավակցական
ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտեն Արցախի կառույցի անունից իր ցավակցությունն ու գորակցությունն է հայտնում ՀՀԴ Ստեփանակերտի «Ա.Մկրտչյան» կոմիտեության անդամ Վահրամ Չովսեփյանին եւ նրա ընտանիքին՝ հոր՝ Վազիֆ Չովսեփյանի վաղաժամ մահվան կապակցությամբ: